ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

208-18

« 29» հոկտեմբերի 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ղեկավարի 2018 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 36 որոշումը:

Առդիր 1 թերթ:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 36

<<29 >> հոկտեմբերի 2018 թ

<<ՍԱՐԻԳԱՀ>> ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱԿՏԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՍՊԱՍԱՍՐԱՀԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 116-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ կետերով, 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշումով, քանի որ կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով <<ՍԱՐԻԳԱՀ>> ՍՊԸ-ի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ՍԱՐԻԳԱՀ>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի վկայական թիվ 1903921) 06-103-0146-0125 ծածկագրով 0.216 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական հողերի գործառնական նշանակության հողամասին տրամադրել Վահագնի, Ալավերդու խճուղի 1, գազալցակայան 1 փոստային հասցեն:
2.Օրինականացնել <<ՍԱՐԻԳԱՀ>> ՍՊԸ-ի սեփականության իրավունքով պատկանող, Լոռու մարզի Վահագնի համայնք, Ալավերդու խճուղի 1, գազալցակայան 1 փոստային հասցեում գտնվող, 06-103-0146-0125 ծածկագրով 0.216 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական հողերի գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 30.18 քմ արտաքին չափերով շինությունը:
3. Պարտադրեցնել <<ՍԱՐԻԳԱՀ>> ՍՊԸ-ի 30-օրյա ժամկետում 30.18 քմ շինության օրինականացման համար համայնքին վճարել 15845 ՀՀ դրամ՝ 1քմ-ի համար 525 ՀՀ Դրամ:
4. Սույն որոշումից բխող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանում:
5.Պետական գրանցման համար հիմք է հանդիսանում սեփականատերերի կողմից համայնքին 15845 ՀՀ դրամի վճարման անդորրագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ